ԳԼՈԲԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԶԱՔԱՐՅԱՆ Վ. Ա.

Մարդը մշտապես զոյատևել է իրեն շրջապատող տեղեկատվական տարածության մեջ: Նույնիսկ արտաքինից հարաբերականորեն կարճաժամկետ տեղեկատվության մուտքը հանգեցնում է մարդու համար ծանր և անդառնալի հոգեկան ընկճվածության: Տեղեկատվությամբ փոխանակվելու հնարավորության բացակայությունը նույնպես վատ է անդրադառնում մարդու հոգեկան առողջության վրա: Մինչև վերջերս մարդու տեղեկատվական տարածությունը տեղայնացված էր: Տեղեկատվական տարածության գլոբալիզացիայի համար նոր խթան էր գրերի հայտնվելը, որը թույլ տվեց կապել տեղեկատվության աղբյուրները ոչ միայն տարածության առումով հեռու գտնվող սպառողների հետ, այլև նրանց հետ, որոնք հեռու են նաև ժամանակային առումով:

Մարդու տեղեկատվական տարածության ընդլայնմանը նպաստեցին գրահրատարակչության և փոստի, հեռագրի և հեռախոսի հայտնագործումը, ռադիոյի և հեռուստատեսության ստեղծումը: Տեղեկատվական տարածության համաշխարհայնացումն ու մարդու գործունեության բոլոր ոլորտներում դրա զանգվածային ներդրումն ահռելի և որոշիչ քայլ էին քաղաքակրթության զարգացման գործընթացում: Մասնավորապես արևմտյան քաղաքակրթության երկրներում ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներն իրականություն դարձրին մարդու՝ տեղեկատվական տարածության ընդլայնումը՝ տեղայինից մինչև մարդկանց բավական սահմանափակ համայնքների ընդգրկումը (ընտանիք, մասնագիտական և հասարակական խմբեր, էթնոս, պետություն) գլոբալ և գործնականում ամբողջ քաղաքակրթությունը ներառող համակարգի մեջ: Քսաներորդ դարավերջին սկսվեց համացանցի հաղթարշավն ամբողջ երկրով, որը ցույց տվեց տեղեկատվական տարածության գլոբալիզացիայի անխուսափելիությունն ու դրանից բխող բոլոր հետևանքները: Այն ընդգրկեց նաև մարդու, հասարակության և պետության անվտանգության բնագավառը:

Մարդու բազմադարյա գործունեությունը տեղային տեղեկատվական տարածությունում թույլ տվեց մշակել այդտեղ մարդու վարքագծի բավականաչափ արդյունավետ չափանիշներ և կանոններ: Դրանք կարգավորում են տեղեկատվական տարածությունում հանրության բոլոր տարրերի փոխգործակցությունը և ապահովում այդ համագործակցության անվտանգությունը: Պատմությանը հայտնի են տեղեկատվություն տարածելու համար կիրառվող վարչարարական, իրավական և

կրոնական արգելքների բազմաթիվ օրինակներ, որոնք կարող են սասանել այն հիմքերը, որի վրա կանգնած է իշխանությունը, և այն մարմինների ստեղծումը, որոնք վերահսկում են արգելքների կատարումն ու պատժում դրանց խախտման համար: Օրինակ՝ Սոկրատեսին պատժելը Հին Հունաստանում, հրկիզումը միջին դարերում, պետական, հասարակական և կրոնական գրաքննության կիրառումը, այլախոհների հալածանքները, գրքերի այրումը և անցանկալի տեղեկատվության վերացումը նույնիսկ մեր ժամանակներում: Այս ամենը վկայում է այն մասին, որ կառավարող վերնախավը միշտ ձգտել է շրջապատող տեղեկատվական տարածությունը դարձնել անվտանգ, համենայն դեպս իր համար: Այս քայլերը տեղեկատվական տարածության մեջ թույլ տվեցին տեղական տեղեկատվական տարածությունում մինչև վերջերս համեմատաբար հաջող իրացնել մարդու անվտանգության ապահովման խնդիրը:

Արդեն իսկ ամբողջ մարդկային քաղաքակրթության ստեղծած ու ձևավորած տեղեկատվական տարածությունը, որում շրջում են տեղեկատվական հոսքերը, օրակարգ է բերում ոչ միայն տեխնիկական, այլև բարոյական խնդիրների լուծումը՝ ծնված հենց այդ տարածության գոյության փաստից: Ժամանակակից հասարակությունում տեղեկատվական համագործակցության ակտիվացումն ու գլոբալիզացիան անձի տեղեկատվական անվտանգության ապահովման առումով առաջ են քաշում ավելի բարձր պահանջներ, որոնք վերաբերում են ինչպես որոշակի խմբերի, այնպես էլ ամբողջ հանրությանը: Եվ տեղեկատվական տարածությունում, որտեղ մարդը ներգրավված է հասարակական և մասնագիտական կարգավիճակով, առանց չափանիշների համապատասխան փաստերի մշակման և կիրառման, առաջ քաշված պահանջները հազիվ թե կարողանան բավարարվել:

Ժամանակակից գլոբալ տեղեկատվական տարածության բնութագրիչ առանձնահատկություններից է նաև, որ այն ընդգրկում է ամբողջ մարդկային քաղաքակրթությունը: Այն ապահովում է գլոբալ տեղեկատվական տարածության թափանցիկությունը, յուրաքանչյուր մարդու և հասարակական խմբի վրա ազդելու փաստացի հնարավորության առկայությունը, տեղեկատվական ներգործությունների սպեկտրի կտրուկ աճը և դրանց ուժեղացումը, մատուցվող տե-ղեկատվական ազդեցությունների ժամանակակից բացահայտման դժվարությունը և դրանց բացասական հետևանքների կանխարգելումն ու չեզոքացումը:

Այս առանձնահատկությունները հիմք չեն տալիս կարծելու, որ միայն իրավական նորմերի ներմուծումը թույլ կտա ապահովել անձի, հասարակական խմբերի և ողջ հանրության տեղեկատվական անվտանգությունը: Չափազանց մեծ է այն խախտելու գայթակղությունը, մանավանդ որ օրինազանցը հաճախ մնում է անպատիժ և չբացահայտված: Սակայն հարկ է նշել, որ նմանատիպ իրավական նորմերի ներմուծումը բավական ուժեղ դիմադրության է հանդիպում որոշակի հասարակական և առաջին հերթին լրագրողական որոշակի շրջանակների կողմից:

Մարդկանց և նրանց գործունեության կարգավորման վարչական քայլերն օր օրի ընդլայնվող տեղեկատվական տարածությունում դառնում են առավել նվազ արդյունավետ: Հնարավոր չէ ստեղծել արգելքների, սահմանափակումների և այլ խոչընդոտների մի ընդգրկուն համակարգ, որը կկարգավորի գործունեությունը և այդ հարաբերությունները: Գործնականում հնարավոր չէ գլոբալ տարածքում ամեն կողմից հետևել այդ արգելքների ու սահմանափակումների կատարմանը: Այս պայմաններում բացասական դեր է խաղացել «ինչն արգելված չէ, այն կարելի է» սկզբունքի կիրառումը: Հիմնականում հասարակությունը դրան պատրաստ չի լինում, և այս դեպքում պետք է գործեն բարոյական չափանիշներն ու սկզբունքները, որոնք հաստատ բավարար չեն: Դրանք պետք է անընդհատ ստեղծվեն, մշակվեն, ու հենց դրանցով կրթվեն հասարակության անդամների հիմնական զանգվածները:

Այստեղ բարոյագիտությունը ներկայացվում է որպես փիլիսո-փայական ուսմունք հասարակությունում բարոյականության, դրա զարգացման, որևէ հասարակական խմբի բարոյականության, սկզբունքների, չափանիշների և դերի մասին: Այլ կերպ ասած՝ այն հասարակությունում և այլոց հետ հարաբերվելու վարքագծի ու նորմերի մի համախումբ է, որը կանխորոշված է մարդու հասարակական և մասնագիտական կարգավիճակով:

Գլոբալ տեղեկատվական տարածության ժամանակակից իրավիճակը մարդու մեջ ստեղծում է հզորության և անպատժելիության զգացողություն: Այդպիսի մարդը իրեն զգում է գյուղացու նման, որը, ասենք, տեղափոխվում է ապրելու քաղաքում: Գյուղում նա «երևում էր», և նրա բոլոր արարքները գնահատում էր գյուղի հանրությունը՝ այդ հասարակության բարոյական չափանիշներին համապատասխան: Շեղումը դրանցից քննադատվում էր ու դատապարտվում, որը ստիպում էր գյուղի բնակչին կատարելու գյուղական չափանիշների պահանջները: Քաղաք ընկնելուն պես գյուղաբնակը կորցնում է հսկողության զգացողությունը սեփական վարքագծի վրա: Նրան թվում է, որ ոչ ոք չի իմանա, որ հատկապես նա է ինչ-որ բան արել՝ խախտելով բարոյական չափանիշները: Դա նոր քաղաքացիների մեջ զուգորդական բռնկման պատճառ է դառնում, և ժամանակ է հարկավոր, որ այդ վարքագիծը նորմատիվ վիճակի հասնի: Նմանատիպ վարքագիծ հատուկ է մեր ժամանակակիցներից շատերին, որոնք առաջին անգամ են շփվում ժամանակակից տեղեկատվական աշխարհի հետ: Դա հատկապես վերաբերում է երիտասարդ սերնդին, որին առաջին անգամ տեղեկատվական տարածությունն աշխարհի մասշտաբով հնարավորություն է ընձեռում ինքնուրույն գործելու և դրսևորելու սեփական անձը: Տեղեկատվական տարածությունում մարդու պահվածքի օրինակները շատ են: Եթե հաշվի չառնենք ծրագրային ապահովման ոլորտում կանխամտածված զանցանքները, ապա կարելի է մի շարք օրինակներ բերել, երբ երիտասարդը միայն ինքն իր գործընկերներին ինչ-որ բան ապացուցելու համար կարող է որևէ կայք «ջարդել»: Գողացված և համացանցով վաճառքի հանված կրեդիտ-

քարտերի տասնյակհազարավոր համարները ցույց են տալիս, թե տեղեկատվական տարածությունում որքան հեշտ է նմանաբնույթ հանցագործություններ կատարելը:

Հատուկ տագնապ է առաջացնում համակարգչային խաղերով տարվելը, որոնց «գերիները» հիմնականում երիտասարդներն են: Դեռևս չամրապնդված հոգեպահվածքով երեխաներն ու դեռահասներն ակտիվորեն ենթարկվում են վիրտուալ իրականության ազդեցության բավական լուրջ վտանգների: Համակարգչային խաղերը մարդկանց մեջ իրադարձություններով հագեցած իրական կյանքի պատրանք են ստեղծում: Շատերը կարողանում են իրենց «սանձել» և խաղերի վրա ծախսել ժամանակի միայն որոշակի մասը:

Առանձին պետություններ արդեն սկսել են իրենց պաշտպանողական մեխանիզմները կիրառել՝ աճող սերնդի վրա վնասակար ազդեցությունը կանխելու համար: Օրինակ՝ Թաիլանդի առողջապահության նախարարությունն արդեն զգուշացնում է ծնողներին, որ նրանք ողջ լրջությամբ մոտենան տեսախաղերի ընտրությանը՝ անշուշտ, հաշվի առնելով երեխաների տարիքը և հուզական վիճակը[1]: Հունաստանի կառավարությունն ազատ խաղերի բոլոր տեսակները հասարակական վայրերում արգելելու մասին նոր օրենք է մշակել[2]: Իսկ եվրոպական որոշ քաղաքներում ինտերնետ-սրճարաններում արգելված է համակարգչային խաղ խաղալը: Օրենքի վերահսկողությունը դրված է այդ սրճարանների սեփականատերերի վրա:

Գլոբալ տեղեկատվական տարածության ձևավորումը կտրուկ սրել է խնդիրները, ներառյալ՝ էթիկականը, որը կապված է մտավոր սեփականության հետ: Մտավոր սեփականությունը փաստացի տեղեկատվություն է, որի տիրապետման իրավունք ունի միայն մի մարդ՝ սեփականատերը:

Գլոբալ տեղեկատվական տարածությունում մարդու վարքագծի լուրջ խոչընդոտ է նաև « տեղեկատվական աղբի» առկայությունը: Վերլուծաբանները ժամանակին կանխատեսել էին, որ էլեկտրոնային փոստ-մարկետինգային կազմակերպությունների գործունեության իրականացման վրա կատարված ամենամյա ծախսերն ամեն տարի տասնյակ հազարի ու միլիարդների հասնող թվերով կաճեն: Այդպես էլ եղավ: Այսօր ամեն երկրորդը, եթե ոչ յուրաքանչյուրը, բախվում է էլեկտրոնային հաղորդագրությունների չարտոնված առաքման խնդրին: Խոսքը մասնավորապես վերաբերում է առևտրային կամ դասական «սպամին»: Սակայն միայն դասական «սպամը» չէ, որ խնդիր է առաջացնում ցանցերի համար: Ինչպես երևում է ամերիկյան հետազոտողների վիճակագրական տվյալների վերլուծությունից, ամեն շաբաթ միջին վիճակագրական ծառայողն իր ծանոթներից ստանում է 30 նամակ «դատարկ» բովանդակությամբ՝ կատակ, անեկդոտ, նկար: Այս նամակների քանակը բավական է,

---

[1] *www.compulenta.ru*

[2] *www.homepc.ru*

որ «կախվի» կորպորատիվ համակարգչային ցանցը: Տարվա կտրվածքով մեկ մարդու հաշվարկով «ընկերական սպամի» թիվը գերազանցում է 2000-ը, ինչը զգալիորեն ավելի շատ է, քան առևտրային «սպամը»: Այդ երևույթը ստացել է «junk e-mail» անվանումը[3]:

Եվրախորհրդարանն էլեկտրոնային հեռահաղորդակցությունների պաշտպանության վերաբերյալ որոշման մի նախագիծ է ընդունել[4], համաձայն որի՝ գովազդային նամակների առաքումը պետք է իրականացվի "opt-in" սկզբունքի հիման վրա: Սա նշանակում է, որ զանգվածային գովազդային էլեկտրոնային առաքումից առաջ ըն- կերությունները պետք է ստանան հասցեատիրոջ համաձայնությունը, կամ պետք է կիրառվի այլընտրանքային "opt-out" սկզբունքը, այսինքն՝ որոշում, որով պարզ է դառնում՝ ապրանքը պետք է դասվի նամակների շարքի՞ն, թե՞ ոչ: Այս որոշումը դրվում է ընկերության վրա, իսկ սա նշանակում է, որ խնդիրը ոչ թե լուծվում է, այլ իրավականից անցնում է բարոյական դաշտ:

Եվրոպական մի շարք երկրներում տեղեկատվության չարտոնված հոդումների նախաձեռնողներին ենթարկում են բավականաչափ կոշտ վարչական և իրավական միջոցների: «Սպամի» ամենամեծ վնասը կապուղիների անհարկի ծանրաբեռնումն է, որի դեմ երկրները պայքարում են խոշոր տուգանքների միջոցով:

Տեղեկատվական գլոբալ տարածությունում լուրջ խնդիր կա նաև հասարակական խմբերի վարքագծի և պետության դերի առումով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միակ համաշխարհային պատերազմը տեղեկատվական պատերազմն է: Այսօր արդեն իսկ տեղեկատվական տեխնոլոգիաներն առաջնահերթ դեր են խաղում ռազմական ոլորտում: Ժամանակակից պատերազմը կարելի է շահել միայն շնորհիվ գլոբալ տեղեկատվական տարածությունում հաղթանակ տանելու դեպքում:

ԶԼՄ-ները նույնպես ակտիվորեն մասնակցում են տեղեկատվական գլոբալ տարածության ստեղծման ու զարգացման գործընթացին ու օգտագործում դրա հնարավորությունները, որոնք թույլ են տալիս ժամանակակից ՏՀՏ-ների կիրառման միջոցով առանձին պետություններին, հասարակական խմբերին և որոշ անձանց զանգ- վածային «մշակման» ենթարկել:

Բազմիցս նշվել է այն մասին, որը ԶԼՄ-ները նախընտրական ընտրարշավներում լուրջ ու անփոխարինելի տարր են դառնում: Այսպիսի հանգամանքների պարագայում միայն բարոյական չափանիշներն են թույլ տալիս խուսափել մի շարք բացասական հետևանքներից, որոնք պայմանավորված են գլոբալ տեղեկատվական տարածության առանձնահատկություններով: Ըստ այդմ՝ տեղեկատվական անհրաժեշտ անվտանգությունը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ 1) գլոբալ տեղեկատվական տարածության էթիկան որոշակի դեր է խաղում անհատի տեղեկատվական

[3] http://office.microsoft.com/en-us/outlook-help/CH010077701.aspx
[4] http://europa.eu

անվտանգության ձևավորման հարցում, 2) անհատը, իր դաստիարակության և բարոյական սկզբունքներից ելնելով, աշխատում է վնաս չհասցնել այլոց, հասարակությանը և պետությանը, նույնիսկ այն դեպքում, երբ դրա համար հարմար և առանց հետևանքների առիթ ընձեռվի:

Հարկ է նշել, որ տեղեկատվական տարածության էթիկան, շնորհիվ մի շարք յուրահատկությունների, դիտարկվում է որպես առավել թույլ մշակված և վատ լուսաբանված գիտական ուղղություն: Առաջին լուրջ ակադեմիական հրատարակությունը, որը նվիրված է ցանցային բարոյական չափանիշներին, պետք է համարել 2000 թ. «Մակմիլան» հրատարակչության անգլերենով լույս ընծայած «Ինտերնետ էթիկա»[5] գիրքը: Այն ՏՀՏ բնագավառի համակարգված, արհեստավարժ հետազոտման մի արդյունք է, որի իրականացմանը մասնակցել է փիլիսոփաների, իրավագետների, գիտնականների և համաշխարհային սարդոստայնի ակտիվ օգտագործողների մի ամբողջ խումբ:

Գլոբալ տեղեկատվական տարածությունը ներառում է որոշակի սպառնալիքներ, և ըստ դրա զարգացման, այդ սպառնալիքները կարող են ուժգնանալ՝ պայմանավորվելով վերը նշված տարածության հատկություններով: Սակայն մարդը չի կարող ապրել այդ տարածությունից դուրս: Անհրաժեշտ է հատուկ մշակված քայլերի համընդհանուր մի համակարգ, որը կապահովի կյանքի ու գործունեության թույլատրելի մակարդակ: Տվյալ համալիրը պետք է ներառի այդ տարածության բոլոր կետերի մանրակրկիտ ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են իրական ժամանակի կարգում՝ նպատակ ունենալով հայտնաբերել գոյություն ունեցող և դրանում ծնվող տեղեկատվական սպառնալիքները, կանխարգելել ու չեզոքացնել դրանք: Այդպիսի մոնիթորինգը հնարավոր կդառնա, եթե գլոբալ տեղեկատվական տարածության սուբյեկտների հիմնական զանգվածը սկսի գիտակցաբար մասնակցել այդ գործընթացին՝ ստանձնելով այդ տարածության անվտանգության բարոյական պատասխանատվությունը: Սա նշանակում է, որ պետք է լինեն հա- մապատասխան բարոյական համընդհանուր չափանիշներ: Սակայն շատ օրենքներում պետք է ներառվեն նաև համապատասխան ճշգրտումներ և լրացումներ, որոնք հաշվի կառնեն գլոբալ տեղեկատվական տարածության ձևավորմանն ու զարգացմանը կապված իրողությունները:

Նոր տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիանե-րի արագ զարգացումն ու տարածումը լուրջ ազդեցություն են ունենում քաղաքականության, գիտության և մշակույթի վրա ինչ-պես ազգային սահմանների ներսում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Գլոբալ տեղեկատվական տարածությունը գլոբալիզացիայի արդյունք է, որն ապահովում է ժամանակի իրական սահմաններում գործունեության ամեն տեսակի իրականացում՝ համաշխարհային չափերով ջնջելով

[5] http://us.macmillan.com/QuickSearchResultsV2.aspx?search=internet+ethics

տարածաժամանակային սահմանները: Գլոբալիզացիան օբյեկտիվորեն նպաստում է այն միտումների ակտիվացմանը, որոնք տանում են դեպի գլոբալ տեղեկատվական տարածության հիմքերի ստեղծումը: Դրա կայացումը հիմնված է մշտապես զարգացող համացանցի, ռադիոյի և հեռուստատեսության վրա, իսկ քաղաքական մշակույթի ձևավորման և գործառութային գործընթացն էլ իրականացվում է հենց նույն գլոբալ տեղեկատվական տարածության շրջանակներում:

ГЛОБАЛЬНОЕ ИНФОРМАЦИОННОЕ ПРОСТРАНСТВО: ЭТИКА И БЕЗОПАСНОСТЬ

ЗАКАРЯН В. А.

Резюме

Информационализм является важной особенностью развития нового свободного информационного пространства, основанного на свободном обмене информацией через интернет. Но именно здесь и кроется главная опасность для человечества. Главное оружие информационализма часто может оказаться (и нередко оказывается) в руках амбициозных или просто психически неуравновешенных людей, для которых демократия не столько свобода слова и защита прав человека, сколько беспредел действий и ублажение собственных амбиций.